«ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1? Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ «մշակութային ոչ առևտրային կազմակերպություն» հասկացությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 6. – 5-րդ «մշակութային կազմակերպություն՝ կազմակերպություն, որի ստեղծման հիմնական նպատակը մշակութային գործունեության իրականացումն է.»

Հոդված 2? Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել 5.1 նոր հասկացությամբ.

«Հոդված 6.– 5.1-րդ «մշակութային ոչ առևտրային կազմակերպություն՝ մշակութային կազմակերպություն, որի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետության կառավարությունը կամ տեղական ինքնակառավարման մարմինները, որի ստեղծման հիմնական նպատակը մշակութային գործունեության իրականացումն է՝ որը բխում է պետության կողմից իրականացվող մշակութային քաղաքականությունից և ռազմավարությունից:

Հոդված 3? Օրենքի 18.1.-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 18.1. Մշակութային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողները

1 . Սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված մշակութային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողներն իրականացնում են տվյալ ոլորտը

կարգավորող նորմատիվ իրավական ակտերին համապատասխան գործառույթներ՝ համաձայն տվյալ պաշտոնի նկարագրի և պայմանագրի:

2 . Մշակութային ոչ առևտրային կազմակերպությունների **ստեղծագործական** աշխատողների կարգավիճակը, աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց ներկայացվող պահանջները, օրինակելի նկարագիրը և ատեստավորման կարգը սահմանում է լիազորված պետական մարմինը:»

Հոդված 4? Օրենքի 18.1.-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել.

Հոդված 5? Օրենքի 21.-րդ հոդվածի 6-րդ, 9-րդ և 11-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել.

Հոդված 6? Օրենքի 21.-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«5) մշակութային առանձին կազմակերպությունների շնորհում է կարգավիճակ, սահմանում է կարգավիճակ շնորհելու կարգն ու պայմանները.»

«7) հաստատում է մշակութային կազմակերպությունների ՝ պետական բյուջեով նախատեսված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման կարգերը.»

Հոդված 7. Անցումային և եզրափակիչ դրույթներ.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

2. Սույն օրենքից բխող նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են օրենքն ուժի մեջ մտնելուց 9 ամիս հետո:

3. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ստեղծված և գործող, ինչպես նաև սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո գործող «ազգային» կարգավիճակ

ունեցող կազմակերպությունները պահպանում են իրենց «ազգային» կարգավիճակը։